ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ

ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Ուշադրության կենտրոնացումը, որպես կրթական կարիք դերային խաղի միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ԱՇԽԱ ՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հասմիկ Բեյբության

ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ՝ Թերեզա Հովհաննիսյան

ԴՊՐՈՑ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լիճքի ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Մարտունի- 2023

Բովանդակություն

Ներածություն 3-5

Գրական ակնարկ 6-8
Փորձարարական հետազոտություն 9
Փորձարարական դաս 1 10-11
Փորձարարական դաս 2 12-14
Եզրակացություն 15
Օգտագործվող գրականության ցանկ 16
Դասի պլան 1 17-19
Դասի պլան 2 20-21

Ներածություն

«Ուշադրությունն այն դուռն է,որի միջով ամեն ինչ ընթանում
էարտաքին աշխարհից դեպի մարդու
հոգի».
Կ.Դ. Ուշինսկ

Տարրական դպրոցում դասավանդելիս խնդիրները բազմակի են և ամեն անգամ առնչվում ես նոր խնդիրների:Կրտսեր դպրոցական տարիքում երեխաներին բնորոշ են առանձնահատկություններ, որոնք հանդիսանում են նախադպրոցական տարիքի օրգանական շարունակությունը: Կրթական գործունեությունը պահանջում է բարձրագույն հոգեկան գործառույթների՝ մտածողության, ուշադրության, հիշողության, երևակայության ինտենսիվ զարգացում:

Երեխան սկսում է տիրապետել հատուկ գործողությունների, որոնք հնարավորություն են ընձեռում կենտրոնանալ կրթական գործընթացի վրա, հիշողության մեջ պահպանել տեսածը կամ լսածը, պատկերացնել որևէ բան, ինչը նախկինում չի տեսել: Եթե նախադպրոցական տարիքում խաղային գործունեությունն էր պայմանավորում բարձրագույն հոգեկան գործընթացների զարգացումը, ապա կրտսեր դպրոցական տարիքում այդ դերը բաժին է ընկնում կրթական գործընթացին:

Այս տարիքում զարգանում է ուշադրությունը: Ուշադրությունը, արթունության ակտիվ վիճակ է, ընկալման ընտրողական ուղղվածություն, որը բնութագրվում է օրգանիզմի պատրաստակամությամբ՝ պատասխանելու ազդակին և արտահայտվում որոշակի օբյեկտի նկատմամբ հոգեկան գործունեության ուղղվածությամբ, որն անհատի համար ունի հաստատուն կամ իրավիճակային նշանակություն:

Կախված անհատի գիտակցական ընտրությունից և կարգավորման առանձնահատկություններից՝ առանձնացվում են կամային, ոչ կամային և հետկամային ուշադրության տեսակներ:

Ոչ կամային ուշադրությունը բնածին գործընթաց է, իրականանում է օրգանիզմի վրա որոշակի ուժի գրգռիչի ազդեցության ժամանակ և մարդուց հատուկ ջանքեր չի պահանջում:

Հասարակական գործունեության ընթացքում մարդը կարողանում է կառավարել իր ուշադրությունը: Ուստի մարդու կամքին ենթարկվող ուշադրությունը կոչվում է կամային:

Դասի ընթացքում ուսուցիչը երեխայի ուշադրությունը հրավիրում է ուսումնական նյութի վրա, տևականորեն պահում է , տեղափոխում է աշխատանքի մի ձևից մյուսին: Նախադպրոցականի հետ համեմատած, կրտսեր դպրոցականներն ավելի ուշադիր են: Նրանք արդեն կարողանում են կենտրոնացնել իրենց ուշադրությունը ոչ այնքան հետաքրքիր գործունեության վրա, բայց նրանց մեջ այնուամենայնիվ գերակշռում է ոչ կամային ուշադրությունը: Նրանց համար արաքին տպավորություններն ուժեղ , շեղող գործոններ են: Նրանց դժվար է կենտրոնանալ անհասկանալի, բարդ նյութի վրա: Ուշադրությունն աչքի է ընկնում ոչ մեծ ծավալով:Կրտսեր դպրոցականը միևնույն աշխատանքի վրա կենտրոնացնում է իր ուշադրությունը 10-20ր:

Բայց եթե երեխան չի կարողանում կենտրոնանալ, դա չի նշանակում, որ նան ինչ-ոչ բան է խանգարում: Հաշվի առնելով սովորողների, հատկապես փոքր տարիքի, համեմատաբար արագ հոգնածությունը, ուշադրությունը շեղող գործոնները մանկավարժները խորհուրդ են տալիս փոխել

աշխատանքի մոտեցումը և կիրառել մեթոդների բազմազանություն: Հարկավոր է երեխաների մեջ արթնացնել հետաքրքրություն և այդ կերպ նպաստել մանկավարժական խնդիրների լուծմանը:Մանկավարժության և հոգեբանության տեսաբանները գտնում են, որ երեխայի հոգեբանությունը , անհատականությունը առաջին հերթին ցայտուն և անմնացորդ արտահայտվում են խաղի մեջ: Խաղով է երեխան ճանաչում երևույթի շատ կողմեր, որոնք ի հայտ են գալիս միայն խաղային իրավիճակում:

Որպեսզի կարողանանք սովորողներին ներգրավել դասի մեջ, պետք է կիրառել հետաքրքրաշարժ ու ուշադրությունը զարգացնող խաղեր: Տրամաբանական և հետաքրքրաշարժ խաղերը հետաքրքրում են երեխաներին:

Կենտրոնացման բացակայությունը ,ցրվածությունը երեխաների շրջանում շատ տարածված խնդիր է:

Այդ իսկ պատճառով էլ որոշեցի ինձ համար որոշ բացահայտումներ անել և խնդիրը ուսումնասիրել խորքային:

Հետազոտությանս նպատակը դարձավ աշակերտների ուսման նկատմամբ հետաքրքասիրության պակասի,ցրվածության,ուշադրության կենտրոնացման բացակայության, անտարբերության նախադրյալների բացահայտումը:

Հետազոտության խնդիրները՝

ո՞րն է պատճառը, որ սովորողների մոտ ուսման նկատմամբ հետաքրքասիրության պակաս է նկատվում.

1. բացահայտել աշակերտների ցրվածության,անուշադրության բուն պատճառները
2. բարձրացնել ուսման նկատմամբ հետաքրքասիրությունը

Հետազոտական փուլերը.

1. փորձարարական հետազոտության իրականացում
2. մեթոդիկաների ճիշտ ընտրություն
3. ստացված արդյունքների գրաֆիկական վերլուծություն
4. Հետազոտության արդյունքների ամփոփում

Գրական ակնարկ

Գիտակցության մեջ ոչինչ չկա, ինչը չլիներ նաև զգայություններում : Սրանից ելնելով՝Ջ. Լոկը ապացուցել է, երեխայի հոգեկանը ձևավորվում է միայն կյանքի ընթացքում: Հանդես գալով Դեկարտի դեմ, ով իր ճանաչողության տեսությունը հիմնավորել է մարդու մոտ բնածին գաղափարների առկայությամբ, Լոկն ապացուցել է այդ դրույթի սխալականությունը. «Եթե գաղափարները բնածին լինեին, նրանք հայտնի կլինեին և՛ մեծահասակին, և՛ երեխային: Այս պարագայում դժվար չէր լինի երեխայի մոտ մաթեմատիկայի, լեզվի, բարոյական նորմերի մասին գիտելիքների ձևավորումը: Բայց բոլոր դաստիարակները գիտեն, որ երեխաներին գրել-կարդալ սովորեցնելը դժվար է, ընդ որում, տարբեր երեխաներ նյութը յուրացնում են տարբեր արագությամբ»:(Ջ. Լոկ) Կա նաև ընկալման մակերեսը, այնքան կենտրոնացված է ուշադրությունը: Այն ապահովում է ուսումնասիրվող օբյեկտների և երևույթների խորին ուսումնասիրում: Ուշադրության կենտրոնացումը կապված է կեղևում գրգռման դոմինանտ օջախի գործառնության առանձնահատկությունների հետ. կենտրոնացումը դոմինանտ օջախում գրգռման արդյունք է գլխուղեղի կեղևի մյուս շրջանների միաժամանակյա արգելակման դեպքում:

Ուշադրության չափազանց կենտրոնացումը (հիպերպրոզեկսիա) արտահայտվում է ցրվածությամբ, ինչ-որ բանով չափազանց տարվածությամբ, երբ չեն նկատվում այլ ազդակներ, ինչպես արտաքին, այնպես էլ ներքին:(Ալեքսեյ Ուխտոմսկի) Ուշադրության էությունը բանականության այս կամ այն օբյեկտի տիրապետումն է կամ մտքերի ուղղվածությունը, գիտակցության կենտրոնացումը և ֆոկուսավորումը: Այն պահանջում է այլ առարկաներից հեռացում

մյուսների հետ առավել արդյունավետ փոխազդելու համար: Ստացվում է, որ ուշադրության առաջին գործառույթը որոշակի տպավորությունների, մտքերի կամ առարկաների վրա ֆոկուսավորումն է և շեղումն այլ՝ տվյալ պահին ոչ պետական մտքերից, առարկաներից:Այսինքն՝ իմացական գործընթացը, որում ներառված է ուշադրությունը, բնորոշվում է ընտրողականությամբ, իսկ ուշադրությունը ընտրելու գործառույթով: Ընտրությունն ունի երկու կողմ. դրական կողմն ընտրելն է այն, ինչն անհրաժեշտ է գործունեության նպատակին հասնելու համար, իսկ բացասական կողմը՝ այն ավելորդ հեռացնելն է, ինչը կարող է խանգարել անհրաժեշտի ընկալմանը :
(Ուիլյամ Ջեյմս)

Կրտսեր դպրոցում շատ ենք կարդում հեքիաթներ և բազմաթիվ աշխատանքներ կատարում դրանց շուրջ՝վերլուծում ենք հեքիաթները, մասերի ենք բաժանում, բնութագրում, նկարագրում ենք հերոսներին, նոր սկիզբ և ավարտ ենք հորինում, հեքիաթների խառնաշփոթ ենք ստեղծում, խաղում ենք հեքիաթները դերերով:

Դերային խաղն ունի շատ առավելություններ:
Երբ սովորողը ներկայացնում է մի որևէ կերպար, ձերբազատվում է իրեն կաշկանդող մի շարք բարդույթներից և ազատ ինքնադրսևորվում՝ խաղալով տվյալ կերպարը:

Դերային խաղը նպաստում է սովորողի՝ տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու կարողությունների ձևավորմանը: Կան բազմաթիվ իրավիճակներ, որոնցում սովորողը փոքր տարիքում, հնարավոր է, դեռ չի հայտնվել, բայց հեքիաթի կերպարի միջոցով իրեն երևակայում է այդ իրավիճակում և փորձում լուծումներ և ելքեր առաջարկել:

Դերային խաղի մեթոդը նաև շատ նպատակահարմար է կրտսեր դպրոցի համար, որովհետև, ի տարբերություն մեծերի, փոքրերը ամաչելու և կաշկանդվելու բարդույթն ավելի հեշտ են հաղթահարում, ավելի անկեղծ են և որգևորվող:
Դերային խաղի մեթոդը շատ նպատակահարմար է իրականացնել՝հիմք վերցնելով մի որևէ հեքիաթ կամ հեքիաթներ: Տվյալ դեպքում սովորողին առաջարկում եմ վերցնել Հ. Թումանյանի «Պոչատ աղվեսը», «Սուտասանը», «Սուտլիկ որսկանը»,«Ծիտը», «Անբան Հուռին», որոնք արդեն սովորողներն ընթերցել և սիրել են:
Աշխատանքի սկզբում հեքիաթները ուղարկում ենք սովորողների էլեկտրոնային հասցեներին, որպեսզի մեկ անգամ ևս ընթերցեն: Հաջորդ օրը դասարանում առաջարկում եմ անսապասելի իրավիճակներ, օրինակ՝ սովորողներին առաջարկում եմ՝ պատկերացնեն, թե հայտնվել են անազատության մեջ և պետք է ելքեր փնտրեն, որպեսզի ազատվեն այդ վիճակից: Սովորողներին դրդում եմ,ելնելով իրենց կերպարի առանձնահատկություններից, բնավորությունից, կողմնորոշվել և առաջարկել, թե տվյալ կերպարը համապատասխան իրավիճակում ինչպես կդրսևորի իրեն:

Այս դեպքում շատ կիրառելի են ռոդարիական հնարները, որոնք թույլ են տալիս չսահմանափակել միտքը և կիրառել թե՛ սովորական, թե՛ անսովոր բոլոր գաղափարներընպատակին հասնելու համար: Հերթով լսելով սովորողներին և նրանց առաջարկած լուծումները, թե իրենց հերոսն ինչպես իրեն կպահի այս կամ այն իրավիճակում,մուտքագրում եմ նրանց մտքերը և համատեղ ուժերով ստեղծված նոր հեքիաթն ըստ դերերի բաժանում սովորողներին:Դերաբաշխումը կատարում ենք տարբեր ձևերով.

պատահական բաշխում
սկզբում բաժանում ենք գլխավոր դերերը, մնացածը՝ ըստ ցանկության
դերերը տալիս ենք ըստ մասնակիցների՝ այդ դերերի համապատասխանությամբ
ընտրում ենք այնպիսի մասնակիցների, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները
ընտրությունը թողնում ենք մասնակիցներին:
Դերերի բաժանելու ձևը կախված է դերային խաղի նպատակից և կոնկրետ խմբից: Աշխատանքի երկրորդ փուլում կազմվում են ֆորմալ, տարասեռ, չորսից հինգ հոգանոց խմբեր, որոնք սկսում են աշխատել հեքիաթի որոշակի հատվածների վրա՝ ստեղծելով հեքիաթի նկարները, ընտրելով երաժշտությունը, ձայնագրելով հեքիաթը: Արդյունքում ստեղծված ֆիլմերը միավորվում են, և ստանում ենք հետաքրքիր և բազմաբովանդակ մեկ ամբողջական հեքիաթ–ֆիլմ:

Այս մեթոդով սովորողները ձեռք են բերում ինքնուրույնություն, սովորում են աշխատել թիմերով՝ մեկը մյուսին օգնելով, ազատվում են տարբեր տեսակների բարդույթներից, վախերից, սովորում են լսել միմյանց, զարգանում են նրանց մտածելու, երևակայելու, ստեղծագործելու կարողությունները: Դերային խաղի միջոցով սովորողը ձեռք է բերում մի շարք հմտություններ.

խոսքի և արտահայտչականության զարգացում
ընթերցանության հմտությունների զարգացում
աշխատանք խմբերով
մեդիահմտությունների զարգացում
հետազոտելու/ համացանցումորոնելու հմտություններ/
թվային միջոցները գործածելու հմտություններ
տեխնոլոգիական հմտությունների զարգացում
երաժշտության, պատկերի, գույների զգացողության, ճաշակի զարգացում
անկաշկանդ ինքնարտահայտվելու կարողություն, ինքնահսկում:
Համատեղ ստեղծված աշխատանքի հաջող լինելու դեպքում այն կարող է վերածվել թատերական ներկայացման:

Այս մեթոդի կիրառման միջոցով սովորողները, ինչպես նաև դասավանդողը, կսովորեն խաղալ իրենց «դերը» կյանքում: Ինչպես ասում էր Վ. Շեքսպիրը՝ «Կյանքը թատրոն է, մարդիկ՝ դերասաններ»:

Փորձարարական հետազոտություն

Հետազոտությունը կատարել եմ Գեղարքունիքի մարզի Լիճքի հիմնական դպրոցի 2-րդ դասարանի 5 աշակերտ հետ :

Աշակերտներից 2-ը ունեին գերազանց առաջադիմություն, 2-ը միջին առաջադիմություն և 1-ը հարվածային առաջադիմություն:

Դասը անցկացրեցի բնականոն գործընթացի սահմաններում: Տնօրենին դիմելուց հետո, մեր ուսուցչի օգնականի հետ սկսեցի իմ սովորական օրվա դասը:

Փորձարարական դաս 1

Դասը սկսեցինք դասաժամի համար սահմանված ժամանակին:

Փորձարարական դասի համար ընտրեցի 5 աշակերտի:Ստուգեցի տնային հանձնարարությունները, միասին վերլուծեցինք գտանք թերությունները ու շտկեցինք դրանք: Սկսեցինք ընթերցել դասը շարունակելով: Աշակերտները դժվարանում էին յուրացնել դասը, նկատեցի ,որ ոչ բոլոր սովորողներն էին հետաքրքրված դասով, կային անհանգիստ երեխաներ,որոնք անուշադիր ,ցվրված նստած էին և անընդհատ դուրս գալու ցանկություն էին հայտնում, պատճառը ուշադրության դժվար կենտրոնացումն էր, այդ իսկ պատճառով փորձեցի դերային խաղ մեթոդը:Երեխաներից ամեն մեկին տվեցի մեր դասում առկա որևէ հերոսի կերպար, աշակերտները շատ ուրախացան, սկսեցին մեծ ոգևորությամբ խաղալ իրենց դերերը, միակ դժվարությունը կապված էր ծույլ աղջկա դերի հետ, երեխաներից ոչ մեկը չէր ցանկանում նմանակել նրան, սակայն այդ հարցն էլ շատ արագ հարթվեց, որովհետև ասացի , եթե ծույլ աղջկան չնմանակեք ուրեմն չենք խաղա:Այս դասին հատկացրեցի 15 րոպե, և ինձ հաջողվեց կենտրոնացնել ուշադրությունը 100 տոկոսով , այնուհետև հարցերի միջոցով ամփոփեցի դասը:Այնուհետև որոշեցի ստուգել աշակերտներին 5 բոպեանոց շարադրության՝ դասը նկարելու միջոցով :5 բոպեանոց շարադրությունները նկարելու միջոցով օգնում են զարգացնել երեխայի միտքը: Դերային խաղը նպաստում է տրամաբանական մտածողության,ուշադրության,հիշողության զարգացմանը: Առաջադրանքը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ վանդակավոր տետր,մատիտ և ռետին, նշել ելման կետ , թվեր, գծեր, սլաքներ , և այդ կետերի, գծերի, սլաքի ուղղության օգնությամբ աշխատել , ստանալով պատկերներ այնուհետև բացատրել թե ինչ են շարադրել նկարների միջոցով:

Աշակերտներին բաժանեցի վանդակավոր թերթեր և հրահանգները ստանալուց հետո սկսեցին աշխատել:Աշխատանքն անհատական է:

Առաջադրանքը դուր եկավ աշակերտներին,նրանք ակտիվացան,թարմացան և կենտրոնացան:

Այս խաղը մոտիվացրեց երեխաներին: Դասարանում կային աշակերտներ,ովքեր առաջնորդի դեր ստանձնեցին, այտեղ այս հատկանիշը դրական ազդեցություն ունեցավ և նրանք ձգտեցին առաջինը լինելու համար ավելի ակտիվ և ուշադիր լինել: Կա աշակերտ ,ով անընդհատ ակիվ է և ցվրված,բայց ի զրմանս ինձ նա կենտրոնացավ ու սկսեց ակտիվ աշխատել:

Առաջին օրվա արդյունքների վերլուծություն

Սովորողի բնորոշող վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն, մասնակցում է դասի ընթացքին	2
Ուշադիր հետևում է դասի ընթացքին	2

Պատասխանում է հարցերի	2
Կատարում է գրառումներ տետրում	2
Պաշտպանում է սեփական տեսակետը	3
Կատարում է տրամաբանական առաջարկներ	3
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	2
Անտարբեր է	1
Այլ վարքագիծ	1

Փորձարարական դաս 2

Հաջորդ օրը ՝մայրենիի դասին, նորից կրկնեցինք նույն առաջադրանքը, խաղի արդյունավետությունը պարզելու համար:Դասը սկսեցինք դասաժամի համար սահմանված ժամանակին:

Փորձարարական դասի համար արդեն իսկ ընտրված 5 աշակերտի հետ:Ստուգեցի տնային հանձնարարությունները, միասին վերլուծեցինք գտանք թերությունները ու շտկեցինք դրանք: Սկսեցինք ընթերցել դասը դերերով:Երեխաների ոգևորությունը շատ մեծ էր, բոլորը անհամբեր սպասում էին դերերով պատմելուն, որովհետև պատմում էին խաղալով, ինչը կրտսեր դպրոցականի սիրելի զբաղմունքը:

Այդ իսկ պատճառով այս դասին դերերը փոխեցի,և ստուգելու նպատակով արդյոք ամբողջ դասին են պատրաստվել, և ի զարմանս ինձ շատ լավ էին պատրաստվել բոլորը, և այլևս ոչ մեկը չդժգոհեց,որ հանկարծ չխաղա ծույլ աղջկա դերը:Այսինքն հասկացան, որ այս ամենը հետաքրքիր դասի անբաժան մասն է:Այս դասին նույնպես դերային խաղ մեթոդին հատկացրեցի 15 րոպե , և արդյունքը եղավ գերազանց:Այնուհետև կրկին տվեցի նկարել այսօրվա իրենց տպավորությունները կապված մեր անցկացրած դասի հետ:

Դասը ընթացավ բնականոն հունով, խաղը կիրառեցի դասի անդրադարձի ժամանակ:

Այս անգամ աշակերտները հստակ գիտեին իրենց անելիքը: Այն աշակերտները ,ովքեր հասցրել էին առաջին դասին ավարտել առաջադրանքը, ավելի արագ ավարտեցին,նրանք ովքեր կիսատ էին կատարել,ավարտեցին,կային նաև աշակերտ ,ով այդպես էլ անավարտ թողեց առաջադրանքը:

Երկրորդ օրվա արդյունքների վերլուծություն

Սովորողի բնորոշող վարքագիծ	Տվյալ վարքագիծը բնորոշող աշակերտների թիվը կամ անունները
Ցուցաբերում է հետաքրքրություն, մասնակցում է դասի ընթացքին	5
Ուշադիր հետևում է դասի ընթացքին	5
Պատասխանում է հարցերի	5
Կատարում է գրառումներ տետրում	5
Պաշտպանում է սեփական տեսակետը	5
Կատարում է տրամաբանական առաջարկներ	4
Ընկերներին բացատրում է անհասկանալի հարցերը	4
Անտարբեր է	0
Այլ վարքագիծ	0

5 աշակերտի դիտարկման բարտ

	Այո	Ոչ	Այլ պատասխան
Դասի թեման հոտաքրքիր էր:	√		
Թեմայի վերաբերյալ հարցեր եմ տվել:		√	
Պատասխանել եմ թեմայի վերաբերյալ հարցերին :	√		
Առաջադրանքը կատարեցի հեշտությամբ:	√		
Առաջադրանքը հետաքրքիր էր:	√		
Առաջադրանքը ցանկանում եմ նորից քննարկել:	V		
Դու՞ր եկավ քեզ :	√		
Կփոխեի՞ր որևէ բան:		√	

Աշակերտների ընդհանուր թիվ ՝ 5:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով դերային խաղը որպես աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու միջոց եկանք հետևյալ եզրակացության՝

1. Երեխաների մեծամասնության անուշադրության պաճառ են հանդիսանում երկար նույն դիրքով նստելը, հոգնածությունը:
2. Ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից՝ կրտսեր դպրոցական տարիքում աշակերտները ուշադրությունը կարողանում են կենտրոնացնել 10-20 րոպե: Որից հետո անհրաժեշտ է ուշադրությունը կենտրոնացնող խաղ-վարժություններ ինչպես նաև ֆիզկուլտ դադարներ կիրառե, իսկ այս դասին բացարձակ արդյունք ստացանք դերային խաղ մեթոդի օգնությամբ:
3. Աշակերտի ուշադրությունը կենտրոնացնելու նախապայմաններից է հանդիսանում լսելու ունակությունը: Եթե աշակերտը չի լսում, ապա դժվարանում է կենտրոնացնել ուշադրությունը հանձնարարված առաջադրանքի վրա:
4. Ուսումնական գործընթացում պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային առանձնահատկությունները և կիրառել աշակերտի համար ուշադրությունը կենտրոնացնելու մեթոդներ ու հնարներ, որոնց արդյունքում աշակերտները բարձր արձյունավետություն կցուցաբերեն:

Օգտագործվող գրականություն

1. Նալչաջյան Ա.Ա. – Ընդհանուր հոգեբանության հիմունքներ
2. Պետրովսկի Ա.Վ. Տարիքային և մանկավարժական հոգեբանություն
3. ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՅՈՒ., ՍԱՀԱԿՅԱՆ Ա. Մանկավարժություն

Դասի պլան **1**

ՈՒսուցչուհի՝ Թերեզա Հովհաննիսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	07.03.2023 թ	Կիսամյակ	2-ր դ	Դասարան	2
Թեմա՝	Ով է մեզանից գեղեցիկը						
Օգտագործվող նյութեր՝	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, տետր, մարկերներ, կպչուն թերթիկներ						
Դասի նպատակը՝	Գիտելիք՝Բառի իմաստային խմբեր.հոմանիշ և հականիշ բառեր: Հմտություն՝ կկարողանան վարժ, սահուն ընթերցել դասը, լսել ,հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը, ինչպես նաև զարգացնել դերային խաղը: Արժեք՝ Ձևավորել ընթերցասիրություն,հարգանք գրքի նկատմամբ,ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: Ակնկալվող արդյունքներ՝ Պետք է , որ բոլորը հասկանան տեքստի բովանդակությունը: Ցանկալի է ,որ շատերը արտահայտիչ ընթերցեն ստեղծագործությունը ՝ հաշվի առնելով առոգանության նշանները և ռիթմիկական դադարները: Ցանկալի է ,որ ոմանք արտահայտիչ ընթերցեն բանաստեղծությունը՝ դրսևորելով խոսքային իրավիճակին համապատասխան հնչերանգ:						
ՈՒսուցման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքներ՝	Վերլուծեն ընթերցած տեքստի բովանդակությունը, պատասխանեն կարդացածի դասին բերաբերվող հարցերին հարցերին: Գնահատում ՝ միավորային Դասի ընթացքը խթանման փուլում՝ Շարունակում ենք թերթել բնության թերթերը և տեսնել , թե էլ ինչ հրաշքեր կան այնտեղ թաքնված և գործողություն ցույց տվող բառերով կկռահենք թե ով է ավելի գեղեցիկը: Իմաստի ընկալման փուլ Տեքստի բարձրաձային ընթերցում:						

	Ուշադիր ունկնդրեք ստեղծագործությունը՝ փորձելով պատկերացնել այն պատկերները,որոնք ներկայացնում է ստեղծագործողը: Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու համար: Հարցեր. ● Ստեղծագործությունը ընթերցելիս ի՞նչ պատկերներ տեսաք: ● Ինչպիսին?ն կդառնս ,երբ մեծանաս: ● Ինչու՞ էր մայրիկի համար աղջիկներից մեկը ավելի գեղեցիկ: Ինչ եք կարծում ,հնարավոր է , որ ծույլ աղջիկը ավելի աշխատասեր դառնա: Դասագրքի առաջադրանքների կատարում: Կշռադատման փուլ Անդրադարձ տեքստի ճկարագարդմանը և բովանդակությանը: Ամփոփում Այսպիսով ՝նս մեկ անգամ համոզվեցինք,թե բարությունն ու աշխատասիրությունը որքան գաղափարներ ունեն իրենց մեջ ,որքան է այն գրավիչ ու սիրելի: • Ինչ եք կարծում ,հնարավոր է ,որ ծույլ աղջիկը ավելի աշխատասեր դառնա: Դասագրքի առաջադրանքների կատարում: Կշռադատման փուլ Անդրադարձ տեքստի ճկարագարդմանը և բովանդակությանը: Ամփոփում Այսպիսով ՝ նս մեկ անգամ համոզվեցինք, թե բարությունն ու աշխատասիրությունը որքան գաղափարներ ունեն իրենց մեջ, որքան է այն գրավիչ ու սիրելի:

Գործողություններ (ժամ/տևողություն)	ՈՒսումնական գործողություն Աշակերտներ	ՈՒսումնական գործողություն և ՈՒսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
45 րոպե	10 րոպե	10 րոպե	5 րոպե	դերային խաղ 15 րոպե
Տնային աշխատանք	Տնային առաջադրանքների բացատ			

5 բոպե	բում և հանձնում:

Դասի պլան 2

ՈՒսուցչուհի՝ Թերեզա Հովհաննիսյան

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	08.03.2023թ	Կիսամյակ	2-րդ	Դասարան	2
Թեմա՝	Ով է մեզանից գեղեցիկը						
Օգտագործվող նյութեր՝	2-րդ դասարանի մայրենիի դասագիրք, տետր, մարկերներ, կպչուն թերթիկներ						
Դասի նպատակը՝	Գիտելիք՝ Բառի իմաստային խմբեր.հոմանիշ և հականիշ բառեր: Հմտություն՝ կկարողանան վարժ, սահուն ընթերցել դասը, լսել, հասկանալ և ճիշտ վերարտադրել հնչող խոսքը, ինչպես նաև զարգացնել դերային խաղը:						

	Արժեք՝ Ձևավորել ընթերցասիրություն,հարգանք գրքի նկատմամբ, ինքնուրույն աշխատանքով իր հետաքրքրությունները բավարարելու ձգտում: Ակնկալվող արդյունքներ՝ Պետք է , որ բոլորը հասկանան տեքստի բովանդակությունը: Ցանկալի է ,որ շատերը արտահայտիչ ընթերցեն ստեղծագործությունը ՝ հաշվի առնելով առոգանության նշանները և ռիթմիկական դադարները: Ցանկալի է ,որ ոմանք արտահայտիչ ընթերցեն բանաստեղծությունը՝ դրսևորելով խոսքային իրավիճակին համապատասխան հնչերանգ:
ՈՒսուցման արդյունքներ, որոնք կլիաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ	
Վերջնարդյունքներ՝	Վերլուծեն ընթերցած տեքստի բովանդակությունը, պատասխանեն կարդացածի դասին բերաբերվող հարցերին հարցերին: Գնահատում ՝ միավորային Դասի ընթացքը խթանման փուլում՝ Շարունակում ենք թերթել բնության թերթերը և տեսնել , թե էլ ինչ հրաշքեր կան այնտեղ թաքնված և գործողություն ցույց տվող բառերով կկռահենք թե ով է ավելի գեղեցիկը: Իմաստի ընկալման փուլ Տեքստի բարձրաձային ընթերցում: Ուշադիր ունկնդրեք ստեղծագործությունը՝ փորձելով պատկերացնել այն պատկերները,որոնք ներկայացնում է ստեղծագործողը: Ցույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու համար: Հարցեր. • Ստեղծագործությունը ընթերցելիս ի՞նչ պատկերներ տեսաք: • Ինչպիսին?ն կդառնս ,երբ մեծանաս: • Ինչու՞ էր մայրիկի համար աղջիկներից մեկը ավելի գեղեցիկ: • Ինչ եք կարծում ,հնարավոր , որ ծույլ աղջիկը ավելի աշխատասեր դառնա: Դասագրքի առաջադրանքների կատարում: Կշռադատման փուլ Անդրադարձ տեքստի նկարագրմանը և բովանդակությանը:

	Ամփոփում Այսպիսով ՝ևս մեկ անգամ համոզվեցինք,թե բարությունն ու աշխատասիրությունը որքան գաղափարներ ունեն իրենց մեջ, որքան է այն գրավիչ ու սիրելի:			
Գործողություններ (ժամ/տևողություն) ՝ 45 րոպե	ՈՒսումնական գործողություն Աշակերտներ՝ 10 պոպե	ՈՒսումնական գործողություն և ՈՒսուցիչ՝ 10 րոպե	Հարցադրումներ՝ 5 րոպե	Կիրառվող մեթոդ (ներ) Դերային խաղ՝ 15 րոպե
Տնային աշխատանք 5 րոպե	Տնային առաջադրանքների բացատրում և հանձնում:			